Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ոսկեվանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա ՝ « Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը դասավանդման գործընթացում»

Մենթոր՝ Անանյան Նաիրա

Ուսուցիչ՝ Օհանյան Տաթև

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1 Տեսական մաս 6

1.1 Դասի պլանավորման կարևորությունը 6

1.2 Ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները 7

1.3 Ժամանակակից մեթոդների դերը դասի պլանավորման տարբեր փուլերում 9

Գլուխ 2 Գործնական մաս 11

2.1 Ուսուցման պլանավորման արդյունավետ տարբերակներ 11

2.2 Դասի պլանավորումը 14

Եզրակացություններ 20

Օգտագործված գրականության ցանկ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը , նա լավ ուսուցիչ կլինի : Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին , ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի , քան նա , ով կարդացել է բոլոր գրքերը , բայց չի սիրում իր աշակերտին : Եթե ուսուցիչը սիրում է և՛ իր աշխատանքը , և՛ իր աշակերտին , նա կլինի կատարյալ ուսուցիչ» :

Լ. Տոլստոյ

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության , զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է , որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթական-դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ , բովանդակություն , միջոցներ , մեթոդներ , կազմակերպման և ղեկավարման գործունեության և դրանցից բխող դիդակտիկ տարրեր: Դասի արդյունավետության հետ կապված մտահաղացումների արդյունավետ իրագործման հրամայականն է դասի ամենօրյա պլանավորումը , որի բաղադրիչներն են՝ դասի թեման , նպատակները (կրթական , զարգացնող , դաստիարակչական) , տեսակը (նոր նյութի յուրացման , ամրապնդման , գիտելիքների , կարողությունների և հմտությունների ստուգման , յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման) , հիմնական փուլերին հատկացվող ժամանակի բաշխումը , հենքային հասկացությունների ձևավորման փուլերը (հասկացությունների ներմուծում , օրինակների ներկայացում , որոնցում կիրառված են այդ հասկացությունները , հասկացությունների էական և ոչ էական առանձնահատկությունների առանձնացում , էական առանձնահատկությունների վրա հիմնված հասկացությունների սահմանում), դասավանդման

մեթոդները՝ բանավոր կամ գրավոր: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել,որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը: Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ: Դասի համար առաջադրանք ընտրելիս կարևոր է հաշվի առնել, որ բոլոր աշակերտները ի զորու լինեն դրանք կատարել, այլապես աշակերտները կկորցնեն ինքնավստահությունը և կնվազի ուշադրությունը:

Դասի պլանավորման համար կարելի է կիրառել դասի հետևյալ կառուցվածքային միավորները՝ դասի սկզբի կազմակերպումը, գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտումը,աշխատանք ուսումնասիրող նյութի հետ, ծանոթացում նոր նյութի հետ, գիտելիքների պլանավորված մակարդակի ապահովում, գիտելիքների համակարգում և ընդհանրացում, տնային աշխատանքի կազմակերպում:

Յուրաքանչյուր դասի պլանը պետք է հանգամանորեն մշակել, կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշները: Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևը և մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը և միջոցները, ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը:

Հետազոտության նպատակն է.

Սովորողների մոտ մտավոր հոգևոր, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը՝ ուսուցման տարբեր մեթոդների կիրառմամբ:

Հետազոտական հարցը

Արդյո՞ք հնարավոր է ուսուցման ժամանակակից մեթոդների, մոդելների կիրառմամբ բարձրացնել դասի նկատմամբ աշակերտների մոտիվացիան:

Հետազոտության խնդիրներն են.

- Գտնել դասի անցկացման արդյունավետ մեթոդներ,
- Փորձարկել տարբեր մեթոդներ և վերլուծել արդյունավետությունը:

ԳԼՈՒԽ 1. ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1.1.Դասի պլանավորման կարևորությունը

Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ: Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով և հմտություններով: «Ուսուցման մեթոդը» բարդ և բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել/ կրթության բովանդակություն/, ինչի՞ համար սովորեցնել/ կրթության նպատակներ/ և ինչպե՞ս սովորեցնել/ ուսուցման մեթոդիկա/: Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր, եղանակներ: Մեթոդը, հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկ, իրար է կապում ուսուցման նպատակը և վերջնական արդյունքը: Ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր:

Յուրաքանչյուր ուսուցիչ ամեն դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առջև.

-Ինչպես հաջող պլանավորել

-Ինչպես հաջող իրականացնել դասը

-Ինչպես կանխատեսել արդյունքները

-Ինչպես վերլուծել հաջողություններն ու բացթողումները

-Ինչպես ձևավորել հաղորդակցական կարողություններ

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն:

1.2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐ

Ի՞նչ է մեթոդը: Մեթոդը հունարեն բառ է /metodos/, որը բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ մի տեղ տանող ուղի, ճանապարհ նպատակին հասնելու համար: Մասնագիտական գրականության ընդունված և տարածված են մեթոդի հետևյալ սահմանումները.

• Ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակ՝ ուղղված կրթության բովանդակության յուրացմանը,

• Ուսուցման այնպիսի ձև, որ կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա,

• Ուսումնական նյութի կազմակերպման և ուսուցման ընթացքում ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության միջոց,

• Ուսուցման գործընթացում ուսուցչի և սովորողի միջև փոխազդեցություն արտացոլող մոտեցումների ու հնարների համախումբ, ուսուցչից դեպի աշակերտը գնացող մտքի ճանապարհ,

• Սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման հիմքում ընկած տրամաբանական կատեգորիա,

• Որևէ տիպի խնդիրների լուծման անհրաժեշտ գործողությունների վերջավոր , կարգավորված բազմություն

Սահմանումների բազմազանության մեջ նկատելի են որոշակի ընդհանրություններ: Այսպես, օրինակ, համարյա բոլոր սահմանումներում մեթոդը բնութագրվում է որպես նպատակին հասնելու միջոց կամ ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեություն: Եթե փորձենք ևս մեկ անգամ բնութագրել մեթոդը, ապա կարող ենք ասել, որ այն ուսուցչի և աշակերտի համագործակցությունն է ` ուսումնական նպատակներն իրականացնելու համար: Այսպիսով՝ ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն :Բայց մեթոդների իմացությունը բավարար չէ ուսուցումն

արդյունավետ իրականացնելու համար : Շատ կարևոր է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրությունն ու կիրառելու կարողությունը: Մեթոդներ ընտրելու ու կիրառելու կարողությունն իր հերթին պայմանավորված է մի շարք գործոններով.

• Սովորողը պետք է հստակ իմանա ինչ է անում և ինչու,

• Սովորողը պետք է միշտ տեղյակ լինի ինչ է իրենից պահանջվում,

• Սովորողը պետք է վստահ լինի, որ ուսուցիչն աջակցելու և օգնելու է,

•Ուսուցիչը պետք է կարողանա համադրել բազմազան մեթոդները նույնքան բազմազան արդյունքների հետ:

Մեթոդի բաղկացուցիչ մասն է կազմում հնարը: Եթե մեթոդը ուսումնական նպատակը տանող ճանապարհն է, ապա մեթոդական հնարները ընթացքում հանդիպող խնդիրները լուծելու, դժվարությունները հաղթահարելու միջոցներ են: Յուրաքանչյուր մեթոդում կարելի է առանձնացնել բազմաթիվ հնարներ: Ուրեմն մեթոդը հնարների ամբողջություն է:

Ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության՝ գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

1.3. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են.

•Աշակերտը նյութը սովորում է ինչ որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի.

•Աշակերտը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն,ստեղծագործական, քննադատական մտածողությանը.

•Աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար.

•Աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ.

• Նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը.

• Ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքն այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան

ԳԼՈՒԽ 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

2.1 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Ուսուցման պլանավորումը ենթադրում է ոչ միայն դասերի պլանավորում, այլև ուսումնական գործունեության պլանավորում առավել ընդհանրական մակարդակով: Այդ առումով ստորև ներկայացվում են պլանավորմանն աջակցող մի շարք գործիքներ: Օրինակ՝ ուսումնառության դիտարկված արդյունքների կառուցվածքը (ՈԻԴԱԿ) շատ օգտակար գործիք է, եթե ուսուցիչը ցանկանում է ուսուցումը կառուցել փոքր գաղափարից ավելի ընդհանուրը տանելու մոտեցմամբ: Բլում-Անդերսոնի աստիճանակարգումը օգտակար է, եթե ուսուցիչը ցանկանում է ուսումնական գործընթացը տրոհել մասերի: Այս հատվածում ներկայացվում են նաև այլ գործիքներ, որոնք նպաստում են ուսուցումն ավելի խելամիտ դարձնելուն: Վերջին տասնամյակներում կրթության ոլորտում մեծ տարածում են գտել տաքսոնոմիաները: Դրանք նպատակ ունեն զանազանելու ուսուցման տարբեր մակարդակներն ու ուսուցիչներին և ուսումնական ծրագրեր մշակողներին օգնել ուսուցումն ավելի բազմազան դարձնելու և սովորողների մոտ տարբեր մակարդակի հմտություններ ու կարողություններ զարգացնելու հարցերում: Տաքսոնոմիաները կարելի է բաժանել վերլուծականի և համադրականի: Վերջինիս դեպքում ուսուցիչը աշակերտներին գիտելիք է մատուցում մասնավորից դեպի ընդհանուրը գնալով: Իսկ վերլուծականի դեպքում իմացությունը բաժանվում է մասերի, և ուսուցումը կատարվում է յուրաքանչյուրի զարգացման ուղղությամբ:

1. **Դասի սկիզբը**

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

1. **ԽՈՐՀՐԴԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:**

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը:

ԳՈՒՇԱԿՈՒՄ :

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին

բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը: Օրինակ՝ կարող եք առանձին թղթերի վրա գրել «կռիվ», «պատերազմ», «տարակարծություն», «անհամաձայնություն» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը: Պատասխանն է՝ կոնֆլիկտը:

ԶԱՐՄԱՆՔ, ԱՆՍՊԱՍԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասն անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է: Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը: Վերջինս ձևակերպվում է պատկերում արտացոլված ոճով: Օրինակ՝ կարելի է դասի սկզբում հարցնել՝ ի՞նչ կլիներ, եթե 1903 թ.-ի հունիսի 12-ի օրենքը Խրիմյան Հայրիկը ընդուներ:

ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ

«Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն: Ահա մի քանի օրինակներ, որոնք կարելի է օգտագործել հատկապես հասարակագիտության դասերին՝

Ամեն արժեք գեղեցկություն է դառնում, բայց գեղեցկությունն ամեն արժեքից բարձր ... »:

Երվանդ Քոչար

«Բարոյականությունն այնպիսի բան է, որը մեզ այլ բաներից ավելի շատ է հետաքրքրում: Մենք կարծում ենք, որ

բարոյական հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա...»:

Դեյվիդ Հյում

2. ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը: Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: 5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը: Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա:

2.2 ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

ՈՒնենալով 14 տարվա աշխատանքային փորձ՝ կարող եմ նշել, որ զանազան մեթոդական հնարների կիրառմամբ հնարավոր է գտնել առավել արդյունավետ և կիրառման համար նպատակահարմար շատ տարբերակներ: Աշխատանքային հմտություններ զարգացնելու և դասերն առավել արդյունավետ կազմակերպելու համար առաջարկում ենք դասի պլանի օրինակ:

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ 3

Դասի թեման՝ Գ. Գաբրիելյան «Նուռ»

Դասի նպատակը՝

1.**Գիտելիքներ**

Աշակերտները պետք է իմանան՝

• **Նոր բառեր և իմաստներ** ՝ արևահամ , արևաբույր , երկրեերկիր, ցաքուցրիվ

• Ճաղկել երկրեերկիր,միրգ,քաղցը, բառերի **ուղղագրությունը**

•Սիրուն, քաղցր, կարմիր, միրգ բառերի **հոմանիշները**

• Ուշ, քաղցր, սիրուն, լցված, նոր, հասած բառերի **հականիշները**

• **Տեղեկություններ** նռան օգտակարության մասին

• **Հարցում** արտահայտող բառեր

2.ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտները պետք է կարողանան՝

• Սահուն և հասկանալով կարդալ բանաստեղծությունը

• Բացահայտել նռան դերը մարդու կյանքում

Բացահայտել բանաստեղծական պատկերները `համեմատություններ,փոխաբերություններ

• Իր բառերով պատմել բանաստեղծության բովանդակությունը

• Բացահայտել բանաստեղծության հիմնական միտքը

• Կրկնվող արմատով բառերի կազմությունը

3. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Աշակերտը պետք է `

• **Կարևորի** նռան օգտակարությունը

• **Հոգատար վերաբերմունք դրսևորի** հայրենի բնության նկատմամբ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Մտագրոհի մեթոդով բացահայտել աշակերտների մտքում նուռ բառի առաջացրած զուգորդումները: Պարզել, թե ինչ գիտեն նռան մասին, և նրանց նախապատրաստել տեքստի ընթերցմանը:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Նռան մասին նյութի ընթերցում՝ փոխգործուն նշանների համակարգի կիրառումով:

Բնագրային աշխատանք `

• **Բառային աշխատանք**

•Տեքստային աշխատանք

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Աշակերտը պետք է՝

Խորանարդում մեթոդով ամբողջացնել նռան մասին ունեցած գիտելիքները: Այժմ ներկայացնում ենք մեր սեփական փորձը, թե ինչպես ենք փորձում մայրենիի դասերի ժամանակ զարգացնել օրինակ՝ քննադատական մտածողություն և ինչ ճանապարհով ենք դա անում, ինչ մեթոդական հնարների միջոցով, ինչպես նաև կտեսնենք՝ ինչքանով է նման աշխատանքն արդյունավետ :

Դասը պլանավորելը բավականին աշխատատար և ինչ-որ չափով բարդ գործընթաց է, այն իրենից ներկայացնում է աշխատատար և շատ պատասխանատու գործընթաց , քանի որ յուրաքանչյուր մեթոդական հնար պետք է կիրառել հիմնավորված և միմիայն անհրաժեշտության դեպքում, որովհետև դասի ժամանակ ոչինչ չպետք է կրի ձևական բնույթ:

Ինքնուրույն ընթերցանության դասին աշակերտներին հանձնարարված էր ընթերցել <<Կարմիր գլխարկը>> (Շառլ Պերո):

Ընթերցելուց առաջ աշակերտներին ներկայացրինք կատարվելիք աշխատանքի բնույթը:

Աշակերտները պետք է ընթերցեն հեքիաթը, հասկանան բովանդակությունը, որից հետո իրենք պետք է մտածեն հեքիաթի համար այլ ավարտ և ստեղծագործեն, ինչպես նաև պետք է նկարազարդեն հեքիաթից մեկ դրվագ, որը իրենց կարծիքով ամենակարևորն էր :

Աշխատանքն իրականացրել ենք խմբերով ՝ 5 խումբ, յուրաքանչյուր խմբում 6 աշակերտ :

Աշխատանքներն ավարտելուց հետո բոլոր խմբերը առաջին հերթին ներկայացնելու են բուն հեքիաթը, պատասխանելու են հեքիաթի վերաբերյալ տրված հարցերին,որից հետո իրենց հորինած վերջաբանը և ցույց են տալու միմյանց իրենց նկարները: Վերջում կատարվելու է քվեարկություն և ընտրվելու են երկու խմբեր :

Յուրաքանչյուրը ընտրելու է իրեն շատ դուր եկած հեքիաթի ավարտը և նկարը, որից հետո հիմնավորելու է իր կատարած ընտրությունը և առանց որևէ մեկի աշխատանքը թերագնահատելու հայտնի իր կարծիքը:

Մինչ ընթերցելը գրատախտակին գրեցին հեքիաթի վերնագիրը: Երեխանե՛ր, ինչ մտքեր առաջացան ձեր մոտ:

Շատերը սկսեցին ուղիղ իմաստով բացատրել բառակապակցությունը, մի քանիսը նշեցին, որ դա մուլտֆիլմ է, 2 աշակերտ նշեց, որ հեքիաթի հերոսուհու անուն է: Այնուհետև աշակերտներին ասեցինք, որ այսօր

ընթերցելու ենք մի հեքիաթ և սա այդ հեքիաթի վերնագիրն է:

Այնուհետև ներկայացրինք կատարվելիք աշխատանքների մասին:

Աշակերտները շատ ոգևորվեցին, նրանց շատ դուր եկավ կատարվելիք աշխատանքը և նրանք մեծ հաճույքով սկսեցին ընթերցել հեքիաթը:

Խմբերը մեծ սիրով և ոգևորվածությամբ սկսեցին աշխատել:

Ավարտելուց հետո սկսեցինք բարձրաձայն կարդալ հեքիաթը մի քանի անգամ:

Կիրառեցինք կարդալու մի քանի տեսակ՝ բարձրաձայն, շարունակելով և ընտրովի:

Ընթերցելուց հետո սկսեցինք քննարկել հեքիաթի բովանդակությունը:

•Ի՞նչ է մեր գլխավոր հերոսուհու անունը:

•Ինչո՞ւ էին նրան այդպես անվանում:

•Ի՞նչ խնդրեց նրան մայրիկը:

•Երեխանե՛ր, ո՞ւր էր գնում աղջիկը, երբ հանդիպեց գայլին:

•Ի՞նչ եք կարծում, ճիշտ վարվեց աղջիկը,երբ ամեն ինչ պատմեց գայլին:

• Ինչո՞ւ, իսկ դուք ինչպե ՞ս կվարվեիք այդ ժամանակ, ի՞նչ կասեիք գայլին:

Նմանատիպ հարցադրումներով աշակերտներին օգնում ենք հասկանալ հեքիաթի բովանդակությունը և հնարավորություն ենք տալիս նրանց մտածել, քանի որ քննադատական մտածողության զարգացման գլխավոր նախապայմանն է հասկանալ եղելությունը և հետո ամբողջի վերաբերյալ կարծիք հայտնել:

Հեքիաթի ավարտը քննարկեցինք այսպես՝

• Ինչ եղավ տատիկի հետ, աղջիկը տեսա՞վ իր տատիկին:

• Երեխանե՛ր, ի ՞նչ խորամանկության դիմեց գայլը:

• Եթե լինեիք աղջկա փոխարեն, կհավատայի ՞ք գայլին:

• Ի՞նչ եղավ աղջկա հետ:

• Ովքե՞ր օգնեցին նրանց:

• Ի՞նչ ճանապարհով օգնեցին նրանց:

• Ձեր կարծիքով լա՞վ էր, որ գայլի վերջն այդպես եղավ:

• Ո՞ր հերոսի արարքներն էին բացասական/ դրական , ինչո՞ւ:

Հետաքրքիր քննարկումից հետո՝ անրադարձանք խմբերի աշխատանքներին:Բոլոր խմբերից մեկական աշակերտ ներկայացրեց խմբի աշխատանքը, որից հետո ընտրեցինք հաղթող խմբին:

• Երեխանե՛ր, եկեք հիմնավորենք մեր կատարած ընտրությունը:

• Ինչո՞ւ ընտրեցիք այս վերջաբանը:

Այնուհետև ցուցադրվեցին նկարները, աշակերտները սիրով դիտեցին նկարները և իրենց կարծիքը հայտնեցին դրանց վերաբերյալ:Ընտրեցինք նաև ամենից շատ հավանումներ ստացած խմբի նկարը:

Աշակերտները շատ համերաշխ և բարձր տրամադրությամբ ավարտեցին աշխատանքը, որից հետո կատարեցինք նման աշխատանք.

Աշակերտները պետք է յուրաքանչյուր տողում ընդգծեն ճիշտ պատասխանը:

Մայրը	**Կերավ**	**Նվագեց**	**Թխեց**
Կարմիր գլխարկը	**Ճանապարհը ընկավ**	**Երգուսմեր**	**Պարուսմեր**
Գայլը	**Կուլտվեց**	**Ագատեց**	**Օգնեց**
Փայտահատները	**հանգստանում**	**Ա2խատ**	**Վիճոու**

	էի ն	**ո ւ մ է ի ն**	**մ է ի ն**

Աշակերտները հեշտորեն հասկացան, թե ինչ պետք է անեն և արագ գտան ճիշտ պատասխանները քանի որ ներթափանցել էին հեքիաթի բովանդակության մեջ :

Այսպիսով,դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ համոզվել ենք, որ մեր կրտսեր դպրոցականները կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ, արտահայտել իրենց կարծիքը, սիրով և հանգստությամբ ընդունել քննադատությունը սեփական աշխատանքի վերաբերյալ: Այս ամենին հասնելու համար պարզապես պետք է նրանց հնարավորություն տալ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ: Արդյունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են, պետք է չամաչեն իրենց մտքերից և չունենան կոմպլեքսներ :

Ուսուցման արդյունավետ մեթոդներից է համարվում նաև խաղը:

Խաղը բացի ժամանցային երևույթ լինելուց , ունի նաև դաստիարակչական , ուսուցողական նշանակություն : Այս դեպքում այն հանդես է գալիս որպես միջոց գիտելիքը տեղ հասցնելուհամար:

Խաղը որպես տարրական դասարաններում կիրառվող տեխնոլոգիա , ուսուցչի աշխատանքի կարևորագույն բաղադրիչներից է : Դրա հետևողական օգտագործումն ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու հիանալի միջոց է : Խաղի նշանակության մասիկ հայ մեծ բանաստեղծ Հովի. Թումանյանը հետևյալն է գրել . 《 Խաղը նրա մանուկ մարդու բնական , օրգանական պահանջն է , նրա լրջությունն է , նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով էմոտենում , դա նրա ձևն է , նրա մեթոդն է :Եվ ամեն բան , ինչ որ տրվում է խաղով , ուրախությունով

ընդունում է , հեշտ էլ յուրացնում , առանց ձանձրանալու , առանց հոգնելու 》:
Խաղը երեխայի կյանքում մեծ տեղ է գրավում , խաղի ընթացքում երեխայի հոգեկանում տեղի են ունենում գլխավոր փոփոխություններ , զարգանում են հոգեկան այն գործընթացները , որոնք անհրաժեշտ են զարգացման նոր առավել աստիճանի անցնելու համար: Խաղալով երեխան ձգտում է գնալ առաջ , նրա մոտ միաժամանակ աշխատում է ենթագիտակցությունը , խելքը և երևակայությունը : Հետևաբար երեխայի զգացմունքային ոլորտի զարգացումը , ինչպես նաև մտավոր կարողությունների զարգացումն ավելի արդյունավետ կատարվում է խաղի մեջ : Խաղը հանդիսանում է ոչ միայն զվարճալի միջոց , այլև սովորական վարժություն , որը սովորողից պահանջում է հնարամտություն , ուշադրություն , փոխզիջում , արագ կողմնորոշվելու կարողություն
, որոշում կայացնելու կարողություն , զարգացնում և կատարելագործում է առարկայի նկատմամբ հետաքրքրությունը : Խաղի նկատմամբ դրսևորված հետաքրքրությունը բնական է և օրինաչափ:Խաղի օգնությամբ ուսուցիչը կարող է հեշտությամբ ակտիվացնել անհամարձակ երախային. Նաուղղակի խաղում է:
Խաղն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի երեխայի տարիքը , առանձնահատկությունը , և այն չպետք է լինի ինքնանպատակ , պետք է իմանա նպատակը , իրագործման ուղիները , դասի այն պահերը , որտեղ պետք է օգտագործվի : Անհրաժեշտ է կիրառել այնպիսի խաղեր , որոնք նպաստում են ոչ միայն ուսուցողական , այլև դաստիարակող և զարգացնող խնդիրների լուծմանը :Երբ ուսուցումը համեմվում է խաղով , այն դառնում է ավելի հետաքրքիր , սրտամոտ և ցանկալի : Առանձնապես մեծ է դիդակտիկ խաղերի դերը , սովորողին խաղալով սովորեցնել համեմատելու , համադրելու , դասակարգելու , ընդհանրացնելու , մտավոր գործողություններ կատարելու կարողությունները , ընդ որում ուսուցանվող խնդիրը գաղտնի է պահվում և իրեն թվում է , թե ինքը խաղում է :
Այստեղ արդեն անհրաժեշտ է ուսուցչի հմտությունը :
Խաղի կիրառումը մեծապես նպաստում է մայրենի լեզվի , մաթեմատիկայի , կերպարվեստի
դասաժամերին , և այն ավելի ցանկալի և արդյունավետ է դառնում : Երեխաների տրամադրությունը բարձրանում է ,

ստեղծվում է բարձր կարգապահություն , իսկ ուսուցչի համար իր առջև դրված խնդիրները հաջողությամբ կատարելու բարենպաստ պայման :

Խաղային գործունեությունը կատարում է հետևյալ գործառույթը.

1. Զվարճացնող
2. Հաղորդակցական
3. Խաղա - բուժական (օգնում է դժվարությունների հաղթահարմանը)
4. Հայտորոշիչ (ինքնաճանաչման հնարավորություն է ընձեռնում)

Խաղերն ըստ բնագավառի լինում են

1. Ֆիզիկական
2. Աշխատանքային
3. Սոցիալական
4. Հոգեբանական

Ըստ մանկական գործընթացի հսկող , ճանաչողական , զարգացնող , հայտորոշիչ ստեղծագործական :

Ըստ խաղային մեթոդիկայի դերային:Խաղային տեխնոլոգիայի իրականացումն ու արդյունավետությունը պայմանավորված են մանկավարժի նախապատրաստական լուրջ աշխատանքով : Այս տեխնոլոգիան բավականին ճկուն է ու հեշտությամբ է հարմարեցվում տարբեր իրավիճակների :

Եթե սիրում ենք երեխային պետք է խաղանք նրանց հետ , խաղանք իսկական , անկեղծ և դա կլինի մեր ամենամեծ նվերը նրանց :

Հիշենք մի պարզ բան . Երեխայի մտքում մնում է այն , ինչն անցել է նրա սրտի դռնով :

Դաստիարակության գործում Թումանյանը մեծ տեղ է հատկացնում խաղին: Խաղը դա երեխայի էությունն է ,օրգանական պահանջը և այն ամենն, ինչ տրվում է խաղով ` հեշտ է յուրացվում: Թումանյանական հեքիաթները մատաղ սերնդի դաստիարակության ամենակարևոր միջոցներից են: Դրանք մանկավարժի դաշնակիցներն են, փոքրիկի խորհրդատուն և դաստիարակը: Իր առաջին քայլերին զուգահեռ երեխան փորձում է ճանաչել աշխարհը, գտնել բազմաթիվ ինչուների և ինչպիսիների պատասխանը ու նրա առաջին խորհրդատուն գիրքն է, որը կազմակերպում է երեխայի հույզերը, մտավոր կարողությունները, ինչպես նաև մշակում ու հարստացնում է լեզուն :Սակայն, քանի որ նախադպրոցական տարիքի երեխաները տառաճանաչ չեն, նրանք կարող են Թումանյանի հեքիաթներին ծանոթանալ խաղային-

թատերական ներկայացումների միջոցով: Հայտնի են թումանյանական հեքիաթներով հարուստ տիկնիկային ներկայացումները, դերային ներկայացումները: Իսկ այսօր, որպես նորամուծություն, այս շարքը համալրելու է գալիս մատնային ու ոտնային թատրոնը, ինչը նորություն է փոքրիկի համար և առավել հետաքրքիր: Փոքրիկը մարմնավորելով հեքիաթի որևէ հերոսի՝ սեփական մարմնի վրա է զգում այն, ինչի միջով անցնում է, օրինակ, Կարմիր գլխարկը, Ամբան Հուռին, Կիկոսը կամ Քաջ Նազարը: Եվ եթե տիկնիկային կամ դերային թատրոնը զարգացնում է փոքրիկի մտավոր կարողությունները, հարստացնում բառապաշարը, նախադասություններ կազմելու ունակությունը և այլն, ապա մատնային կամ ոտնային թատրոնի դեպքում այս ամենին ավելանում է նաև ֆիզիկական ճկունության զարգացումը և մանր մատորիկայի մարզումը: Ի դեպ, այն լավագույնս ճոխացնում է երեխայի երևակայությունն ու դառնում թատերականացված յուրատեսակ խաղ՝ ոտքերի ու մատների մասնակցությամբ: Ինչպես, օրինակ, երեխայի ճկույթիկը կարող է դառնալ հենց հեքիաթի ամենափոքրիկ հերոսը :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարելով հետազոտական աշխատանք եկա հետևյալ եզրահանգումներին.

• Ուսուցիչն իր համար պետք է հստակեցնի դասը, նրա խնդիրները: Յուրաքանչյուր դաս կարող է ունենալ մի քանի խնդիրներ: Նրանք պետք է լինեն կոնկրետ: Ուսուցիչը դասի համար պետք է նախատեսի այնպիսի խնդիրներ, որոնք աշակերտներին կտանեն մտածողության տարբեր տեսակետների միջոցով՝ ինֆորմացիայի տիրապետում, կյանքում դրանց կիրառում: Դասի արդյունավետությունը

բարձրացնելու նպատակով ուսուցիչը նախքան նոր նյութին անցնելը պետք է վեր հանի աշակերտի նախնական գիտելիքները այդ թեմայի վերաբերյալ, իսկ եթե այդ գիտելիքները բավարար չեն, որոշակի բացատրություններ տա, ապա անցնի դասանյութին

• Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է հստակեցնի գնահատման խնդիրը: Գնահատման համար ուսուցիչը պետք է ստանա ապացույցներ, որ աշակերտները՝

Ա) Յուրացրել են դասանյութի բովանդակությունը,

Բ) Ձեռք են բերում մտածողության և սովորելու համապատասխան փորձառություն:

Գնահատումը կարող է իրականացվել դասին զուգահեռ, նրա տարբեր փուլերում և ոչ թե միայն վերջում, ինչպես դա արվում է ավանդաբար: Սովորողնել գիտելիքների գնահատման մասին որոշումները ներառում են՝ դասավանդման կառավարումը, սովորողներին կրթական տարբեր ծրագրերում ներառելը, նրանց համապատասխան կարգեր տալը , ուղղորդելը , խորհուրդներ տալը , կրթական հնարավորությունները բացահայտելը , ինչպես նաև նրանց իմացությունը հավաստագրելը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Մարտին Բարեթ, Լուիզ դե Բիվար, Բլեք Մայքլ Բիրամ և ուրիշներ, Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Կիրառական ուղեցույց, Հատոր 3, 165 էջ
2. https://rm.coe.int/arm-referenceframework-vol-3/1680a1b758/30/12/2017
3. Ձևավորող գնահատման 9 հնար , https://kznakgnahatum.blogspot.com/p/9.html:
4. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html
5. https://innostud.am/application/library/5ced296a.pdf